ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 12, 2022թ.

Վարկի համարը՝ IBRD 85720 «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման ծրագիր» (ՏՏԵԶԾ)

Առաջադրանքի անվանումը՝ Ծրագրերի փորձաքննության գծով խորհրդատու

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **AFT IC-01**

Վերջնաժամկետ՝ 2022թ. հոկտեմբերի 19-ը

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Սոցիալ ներդրումների և տեղական զարգացման ծրագրի (ՍՆՏԶ) լրացուցիչ ֆինանսավորումը (ՍՆՏԶ ԼՖ) կոչված է օժանդակելու ՀՀ-ում տարածքային տեղական զարգացմանը: ՍՆՏԶ ԼՖ-ի արժեքը շուրջ 25,4 մլն Եվրո է: ՍՆՏԶ ԼՖ-ն իրականացնում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից:

ՍՆՏԶ ԼՖ-ն Բաղադրիչ 2.՝ «Օժանդակություն միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացումների նախաձեռնություններին:» շրջանակներում նախատեսվում է վարձել տարածքային զարգացման բարեփոխումների փորձաքննության գծով խորհրդատու, որի պարտականությունները ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալ կետերով.

- Արևային ֆոտովոլտային ինքնավար կայանների, ալտերնատիվ էներգիայի աղբյուրների և էներգախնայողության բնագավառներում գիտելիքի և փորձի առկայություն:
- Հանրային սեկտորի էներգաաուդիտի, կարիքների գնահատման, ինքնավար արևային կայանների տեխնիկական առաջադրանքներ կազմելու, օբյեկտների համար էներգետիկ արդիականացման ծրագրեր մշակելու ունակություն:
- Արտաքին լուսավորության համակարգերի արդյունավետության գնահատում և դրանց արդիականացման առաջարկների մշակում:
- Էներգետիկայի բնագավառի օրենսդրության և նորմատիվային ակտերի իմացություն:
- Ծրագրերի էներգախնայողության բաղադրիչների փորձաքննության և իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրության ունակություն:
- Փորձաքննության հաշվետվությունների պատրաստում:
- Կատարվող կամ կատարված աշխատանքների որակի գնահատում:
- Աջակցություն համայնքներին տեղական կոմունալ ընկերություններից անհրաժեշտ թույլտվություններ ստանալու հարցում, այդ թվում՝ կապ հաստատելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հետ (ՀՀ ՏԿԵՆ)՝ դրանց ժամանակին տրամադրումը հեշտացնելու համար:

Պահանջվող կրթությունը և ունակությունները

- ✓ Ինժեներական բարձրագույն կրթություն, էներգետիկ ինժեների նեղ մասնագիտացումը խրախուսվում է:
- ✓ Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ՝ էներգաաուդիտի, արևային կայանների նախագծման և կառուցման, հասարակական օբյեկտների էներգետիկ կարիքների ուսումնասիրության, էներգախնայողական ծրագրերի գեներացիայի և իրականացման բնագավառում:
- ✓ Համայնքներ/բնակավայրեր/ այցելելու և իրականացված ծրագրերը գնահատելու կարողություն:
- ✓ Ուժեղ հաղորդակցման ունակություններ. հաղորդակցվելու ունակություն ՏԻՄ, ՀԿ և այլ ոլորտի ներկայացուցիչների հետ:
- ✓ Համակարգչային գիտելիքներ, առցանց արևային քարտեզներից օգտվելու կարողություն, Windows, օպերացիան համակարգով և MS Office փաթեթի հիմնական ծրագրերով աշխատելու ունակություն:
- ✓ Վարորդական իրավունքի առկայություն՝ առնվազն B կարգ:

Հաշվետվության պահանջներ և տևողություն

Պայմանագրի ժամկետը - 1 տարի՝ երկարաձգման հնարավորությամբ:
Խորհրդատուն պետք է ներկայացնի ամսական հաշվետվություններ, որոնք կներառեն նշված ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների մասին տեղեկություններ:

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV), որակավորումը հիմնավորող փաստաթղթեր և անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի "Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011, փոփոխված 2014թ" սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգի համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Փաստաթղթեր պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am և atdf@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2022թ. հոկտեմբերի 19-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: